Վարդան Եսայան

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԾԽԱԽՈՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԸ. ԷՆՖԻԱՋՅԱՆՑՆԵՐ

Բանալի բառեր. ծխախոտարդյունաբերություն, մեքենայացում, գրահիրատարակչություն, քաղաքային դումա, «Ն.Հ. Բոզարջյանց և որդիներ» ընկերություն, կոալիցիոն կառավարություն:

Թիֆլիսի նահանգում արդյունաբերական մի շարք ճյուղեր գրեթե ամբողջությամբ կենտրոնացած էին հայ արդյունաբերողների ձեռքում և մենաշնորհը պատկանում էր նրանց: Դրանցից էր ծխախոտի արդյունաբերությունը, որը շնորհիվ հայ ձեռնարկատերերի, ունեցավ աննախադեպ առաջընթաց, մինչև 1890-ական թթ. կեսը ամբողջովին մեքենայացվեց, հագեցվեց նորագույն սարքավորումներով, որոնք աշխատում էին նաև էլեկրականությամբ: Շնորհիվ մեքենայացված արտադրության, գործի հմուտ կազմակերպման, հայ արդյունաբերողներն ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը՝ ծխախոտի արտադրությունը դարձնելով բացառապես հայկական: Դրանում բացառիկ էր էնֆիաջյանցների դերը, որոնք Թիֆլիսի նահանգում ծխախոտի արտադրության առաջնեկներն էին և այդ ոլորտում երկու խոշորագույն արդյունաբերողներից մեկը:

Գերդաստանի ավագը և ծխախոտի ֆաբրիկայի հիմնադիրը 2-րդ գիլդիայի վաճառական Համբարձում Մկրտչի էնֆիաճյանցն* էր, որը ծնվել է 1824 թ. (այլ տվյալներով՝ 1821/22թթ.[1])՝ Կարինում: 1846 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, աշխատել որպես ուսուցիչ: Եղբոր՝ Ավետիքի հետ բացել է գրավաճառանոց, վաճառել տարբեր լեզուներով գրականություն[2]: Սերը գրքի, գրականության, հայ մշակույթի հանդեպ Հ. էնֆիաճյանցը պահպանեց մինչև իր կյանքի վերջը, նպաստելով հայ հրատարակչական գործի զարգացմանը, հայկական հին ձեռագրերի հավաքմանը և պահպանմանը:

Հ. էնֆիաճյանցը Կախեթում, Սղնախի գավառի Լագոդեխ գյուղի մոտ ուներ ծխախոտի պլանտացիաներ[3]: Լագոդեխի առաջին հայ գաղթականները զբաղվում էին հատկապես ծխախոտագործությամբ, որի մշակումն այդ ժամանակներում (1860-ական թթ.) ողջ Այսրկովկասում նորություն էր. «ծխախոտագործությունը Կախեթում սկիզբ է առել 19-րդ դարի 60-ական թթ.: Առաջին փորձավայր հանդիսացավ Լագոդեխը, որտեղ Թուրքիայից եկած ոմն մեկը առաջին անգամ ծխախոտ ցանեց: Հաջողությունն ուրիշներին էլ դրդեց զբաղվել շահեկան գործով: Սկզբում գործի են անցնում ծխախոտի առևտրի խոշոր ներկայացուցիչ Հ.էնֆիաճյանցն ու ուրիշները, հետո տեղի բնակիչները՝ վրացիներն ու ռուսները…»[4]:

Դեռևս 1852 թ. Թիֆլիսում Հ. էնֆիաճյանցը հիմնել էր ծխախոտի ֆաբրիկա, որտեղ 1880 թ. աշխատում էր 80 մարդ, տալիս էր տարեկան ընդամենը 12հզ. ռուբլու արտադրանք[5], իսկ 1880-ական թթ. կեսին այստեղ աշխատում էր 45 մարդ, արտադրանքը տարեկան 40հզ. ռուբլի էր[6]: 19-րդ դարի վերջին-20-րդ դարի սկզբին այն դարձավ Նիկողոս Բոզարջյանցի ֆաբրիկայից հետո երկրորդ խոշոր ծխախոտի մեքենայացված ձեռնարկությունը Թիֆլիսի նահանգում: 1855 թ. Հ.էնֆիաճյանցը Թիֆլիսում ուներ գլա-

---

* Ազգանունը ծագել է էնֆիաճի՝ «քթախոտ պատրաստող և վաճառող» թուրքերեն բառարմատից, Տե՛ս Ավետիսյան Տ., Հայոց ազգանունների բառարան, Ե., 2010, էջ, 121: Ժամանակի աղբյուրներում և մամուլում Հ. էնֆիաճյանցի ժառանգները նշվում են ոչ թե էնֆիաճյանց, այլ՝ էնֆիաջյանց, էնֆիանջյանց, էնֆիաջյան: Մենք նախընտրել ենք էնֆիաջյանց ձևը, քանի որ այն առավել հաճախ հանդիպողն է:

[1] «Մշակ», 1896, N: 34:

[2] ՀՍՀ, հ. 4, Ե., 1978, էջ 60:

[3] «Մշակ», 1896, N: 34:

[4] «Кавказ», Тифлис, 1903, N: 204, с. 2. Տես նաև՝ Կարապետյան Ս., Հայերը Կախեթում, Ե., 2004, էջ 103:

[5] Бакрадзе Г., Возникновение и развитие капиталистической промышленности в Грузии в XIX веке, Тбилиси, 1958, с. 246.

[6] Хоштария Э., Очерки социально-экономической истории Грузии, Тбилиси, 1974, с. 111.

նակի երկու կրպակ, մեկը՝ Երևանյան հրապարակում, Գ. Թամամաշյանի իջևանատան առաջին հարկում, մյուսը՝ Վելյամինովսկայա փողոցում, Խոջամինասյանի իջևանատանը: Սրանք քաղաքում ծխախոտի առաջին քաղաքակիրթ վաճառատեղիներն էին[1]: 1889 թ. աշնանը Թիֆլիսում կայացած գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների կովկասյան առաջին ցուցահանդեսում (Կովկասյան արդյունահանդես) Հ.Էնֆիաճյանցն արժանացավ ոսկե մեդալի՝ սեփական պլանտացիաներից բարձր որակի ծխախոտի արտադրանքի համար[2]: Հ.Էնֆիաճյանցը եղել է 1872 թ. հիմնված Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերության հիմնադիր անդամներից:

Հ.Էնֆիաճյանցը ձեռնարկատիրությունից բացի զբաղվում էր գրահրատարակչական և հասարակական գործունեությամբ, 60-70-ական թթ. հայտնի հրատարակիչ էր, տպարանատեր, բազմաթիվ ազգանպաստ գործերի նախաձեռնող և կազմակերպիչ: Նա աշխատակցել է Կովկասում հայերեն առաջին պարբերականին՝ «Կովկաս» շաբաթաթերթին, որը լույս էր տեսնում Թիֆլիսում 1846-1847 թթ.: 1859 թ. Գ.Մելքումյանի հետ հիմնել է տպարան՝ ձուլարանով, տպագրել բազմաթիվ գրքեր: 1860-1863 թթ. եղել է իր հիմնադրած «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրի (1864 թ.՝ «Հայկական աշխարհի կռունկ», 1865-1879 թթ.՝ «Հայկական աշխարհ») տնօրենը և հրատարակիչը: 1863-1886 թթ. հրատարակել է «Մեղու Հայաստանի» լրագիրը[3], 1876-1881 թթ.՝ «Փորձ» ամսագիրը: Հ. Էնֆիաճյանցը մենակ կամ Գ.Մելքումյանի և այլոց ընկերակցությամբ 1860-1880-ական թթ. տպագրել է Խ.Աբովյանի, Պ.Պռոշյանի, Ղ.Աղայանի (աշխատում էր իր տպարանում), Գ.Սունդուկյանի, Ռաֆֆու և այլոց երկերի առաջին հրատարակությունները: 1883 թ. նա տպարանը վաճառել է Մ.Ռոտինյանցին:

«Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրում Հ.Էնֆիաճյանցը հանդես է եկել հոդվածաշարով՝ առաջարկելով Թիֆլիսում ստեղծել ազգային գրադարան (Հայկական մատենադարան), որտեղ պետք է պահվեին հայկական հին ձեռագրեր, տպագիր հայկական գրքեր և ծառայեր ազգի լուսավորությանը: Նա նաև առաջարկել էր հիմնել «Թանգարան վերածնության ազգային մատենից» կամ՝ «Հայկական թանգարան վերածնության», որը ստեղծման օրից դառնալու էր Թիֆլիսի հայության սեփականությունը: Հ.Էնֆիաճյանցը կազմել է Վերածնության թանգարանի կանոնադրությունը, ստեղծել հիմնադրամ, որի նախնական դրամագլուխը պետք է լիներ 2.500 ռուբլի: Այդ նպատակով նա խնդրում է 50 հոգու, որ յուրաքանչյուրը 50-ական ռուբլի նվիրաբերի այդ գործին, ինքն էլ լինում է առաջին նվիրատուն[4]: Ընդամենը ամիսներ անց նրա այդ նախաձեռնությանն արձագանքում են 18 թիֆլիսահայ հայտնի վաճառականներ, արդյունաբերողներ, բանկիրներ, հասարակական գործիչներ՝ գեներալ Երեմիա Արծրունին, Ալեքսանդր Թահիրյանը, Ալեքսանդր Ծովիանյանը, Ավետիք Ավեշնիկյանցը և ուրիշներ, որոնք նվիրաբերում են նվազագույնը 50 ռուբլի[5]: Հ.Էնֆիաճյանցը նաև հավաքել և հետագայում Մոսկվայի Լազարյան ճեմարանին է հանձնել շուրջ 200 հայկական հին ձեռագիր[6]:

Հ. Էնֆիաճյանցն աչքի է ընկել հասարակական ակտիվ գործունեությամբ: Լինելով հայտնի ծխախոտարդյունաբերող, նա շատ մտավորականների (Գևորգ Հախվերդյան, Պետրոս Շանշյան, Գաբրիել Սունդուկյան և ուրիշներ) հետ պաշտպանել է 1865 թ. ամռանը բռնկված Թիֆլիսի համքարների խոշոր ապստամբությունը և հանդես եկել որպես քաղաքագլուխ Գալուստ Շերմազանյանցի (Շերմազան-Վարդանյանց) հակառակորդ: Վերջինս մեղադրել է նրանց համքարներին խռովության դրդելու մեջ և քննչական հանձնաժողովին ներկայացրել իր մեղադրանքները, բայց հանձնաժողովը չի հաս-

[1] Դադայան Խ., Հայոց առևտրատնտեսական ներկայությունը Թիֆլիսում (ուշ միջնադար-1918), «21-րդ դար», թիվ 1 (19), Ե., 2008, էջ 139:
[2] Кавказский календарь на 1890 год, Тифлис, 1889, с. 69.
[3] «Մուրճ», 1896, N: 2, «Մշակ», 1896, N: 34:
[4] «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1860, N: 10, էջ 781-803:
[5] Նույն տեղում, 1861, N: 1, էջ 80:
[6] ՀՍՀ, h. 4, էջ 60:

տատել դրանք և չի կալանավորել մտավորականներին[1]: Հ.Էնֆիաճյանցը Թիֆլիսի քաղաքային վարչության անդամ և դումայի պատգամավոր է եղել 1856, 1857 և 1864 թթ.[2]: Մահացել է 1896 թ. մարտի 16-ին՝ Սղնախում:

Համբարձում Էնֆիաճյանցի որդիները՝ Արտաշես և Տիգրան Էնֆիաջյանցները, նույնպես հայտնի ձեռնարկատերեր և հասարակական գործիչներ էին: Հոր գործը ծխախոտի արդյունաբերության ոլորտում հաջողությամբ շարունակեց և զարգացրեց ավագ որդին՝ 1-ին գիլդիայի վաճառական Արտաշեսը: Նա ծնվել է 1866 թ. Թիֆլիսում, ավարտել տեղի տեխնիկական դպրոցը: 1897 թ. Սղնախի գավառի Մաշնախրի գյուղի մոտ ծխախոտի ցանքսերն ընդարձակելու նպատակով նրան թույլատրվել է 12 տարով վարձակալել չորս դեսյատին հողատարածք[3]: Նա վերազինեց հոր ծխախոտի ֆաբրիկան, ամբողջովին մեքենայացրեց, որն աշխատում էր նաև էլեկտրաշարժիչով, ինչն էլ նպաստեց արտադրության աճին: Շնորհիվ տեխնիկական վերազինման, Ա.Էնֆիաջյանցի ֆաբրիկան ընդլայնեց արտադրությունը՝ 20-րդ դարի սկզբին տալով 594.053 ռուբլու արտադրանք (արտադրում էր 258հզ. ռուբլու վերամշակված թութուն և 336.053 ռուբլու ծխախոտ ու գլանակ)[4], իսկ ըստ վրացի հետազոտող է.Խոշթարիայի, 1900 թ. Ա.Էնֆիաջյանցի ֆաբրիկան տալիս էր տարեկան 608հզ. ռուբլու արտադրանք[5]: 1916 թ. տվյալներով Թիֆլիսի նահանգում ծխախոտի 6 խոշոր ֆաբրիկաներում (բոլորն էլ հայկական) աշխատում էր 820 մարդ և միասին տալիս էին 2 մլն 810հզ. ռուբլու արտադրանք[6]: Դրա գրեթե կեսը՝ 1 մլն 300հզ.-ից ավելի, տալիս էին ծխախոտաարդյունաբերության երկու հսկաները՝ «Ն.Հ.Բոզարջյանց և որդիներ» ընկերությունը և Արտաշես Էնֆիաջյանցի ֆաբրիկան, որոնցում աշխատում էր 455 մարդ՝ ընդհանուր 820-ից: Ա.Էնֆիաջյանցի ֆաբրիկան թողարկում էր «Սոլիդնայա», «Ինտելեգենտնայա», «Էքստրա» անվանումներով ծխախոտներ և «Լեվ» անվանումով գլանակներ: Ֆաբրիկայի ֆիրմային «Լեվ» խանութները գտնվում էին Վորոնցովյան փողոցում և Երևանյան հրապարակում՝ «Կովկաս» հյուրանոցի նկուղային հարկում: Ա.Էնֆիաջյանցի ֆաբրիկայի արտադրանքը 1893 թ. Չիկագոյի համաշխարհային ցուցահանդեսում արժանացել է բարձրագույն պարգևի և 10-ից ավելի ոսկե ու այլ մեդալների համաշխարհային ու ռուսական ցուցահանդեսներում:

Ա.Էնֆիաջյանցը Թիֆլիսի վաճառականական բանկի հիմնադիրներից և կառավարման խորհրդի անդամներից էր, մասնակցել է 1916 թ. Հայկական միասնական բանկ ստեղծելու նպատակով խոշոր արդյունաբերողների և բանկիրների թիֆլիսյան խորհրդակցությանը[7]: Նա եղել է Թիֆլիսի քաղաքային դումայի անդամ, Վաճառականական վարչության ավագի տեղակալ, Առևտրի և մանուֆակտուրայի կոմիտեի, Ալ. Մանթաշյանց առևտրային դպրոցի և Թիֆլիսի 1-ին առևտրային ուսումնարանի (գիմնազիա) հոգաբարձուների խորհուրդների անդամ: Ա.Էնֆիաջյանցը նաև Թիֆլիսի երկաթուղային ուսումնարանի չքավոր սովորողների օգնության ընկերության նախագահն էր[8], Խոնիի (Քութաիսիի նահանգ) արհեստագործական դպրոցի պատվավոր տեսուչ: Նա 1909 թ. հոր 300 հատոր հայերեն գրքերը նվիրեց Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը[9]:

Արտաշես Էնֆիաջյանցը նաև հայտնի կուսակցական և Հայաստանի առաջին Հանրապետության պետական գործիչներից էր: 1905 թ. ակտիվ մասնակցություն է ունեցել Ռուսաստանի ժողովրդական ազատության կուսակցության (կադետների) «Մշակ»

---

[1] Կարապետյան Ս. Թիֆլիսի քաղաքագլուխները, Ե., 2003, էջ 60-62:
[2] Кавказский календарь на 1857 год, Тифлис, 1856, с. 522, на 1858 год, Тифлис, 1857, с. 426, на 1865 год, Тифлис, 1864, с. 15-16.
[3] «Кавказ», 1897, N: 159. Տե՛ս Կարապետյան Ս., Հայերը Կախեթում, էջ 104:
[4] Список фабрик и заводов Российской империи, под ред. В.Е. Варзара, СПб, 1912, с. 248.
[5] Хоштариа Э., նշվ. աշխ., էջ 119-120.
[6] Кавказский календарь на 1917 год, Тифлис, 1916, с. 322-323.
[7] Оганджанян А., Банки Закавказья до установления советской власти и идея создания «Армянского банка», ՊԲՀ, 1970, N 1, էջ 231-232:
[8] Кавказский календарь на 1917 год, с. 792.
[9] Դադայան Խ., Հայոց առևտրատնտեսական ներկայությունը Թիֆլիսում (ուշ միջնադար-1918), էջ 140:

թերթի շուրջ համախմբված խմբի (ապագա Հայ ժողովրդական կուսակցության կորիզն էր) գործունեությանը: Ավելի ուշ եղել է Հայ ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) հիմնադիր անդամներից, և իր ներդրումն է ունեցել այդ քաղաքական ուժի ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Ա.Էնֆիաջյանցը գործուն մասնակցություն է ունեցել ՀԺԿ-ի ծրագրերի, հատկապես տնտեսական հատվածի մշակմանը, որում կուսակցությունը հայտարարեց, որ պաշտպանում է կապիտալի, մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների գերակայությունը[1]: Ա.Էնֆիաջյանցը հաճախ էր հանդես գալիս տնտեսությանն ու ֆինանսական բնագավառներին նվիրված շահեկան զեկուցումներով, որոնք տպագրվում էին կուսակցության «Ժողովուրդ» և «Ժողովրդի ձայն» պաշտոնաթերթերում:

Հայաստանի առաջին Հանրապետության գոյության հենց սկզբից Ա.Էնֆիաջյանցը մյուս բոլոր հայերի նման ոգևորված էր սեփական պետականության ստեղծման փաստով, սակայն կառուցողական ընդդիմության դիրքերից հաճախ էր հանդես գալիս նաև ՀՀ կառավարության գործունեության քննադատությամբ: Իսկ երբ Հովհ.Քաջազնունու առաջին կառավարությունը հրաժարական տվեց (1918 թ. նոյեմբերի 4) և ՀԺԿ-ն մաս կազմեց կոալիցիոն կառավարությանը, նա դարձավ ֆինանսների նախարար: Ա.Էնֆիաջյանցը հայտարարեց, որ նոր տարում ներկայացնելու է կայուն պետական բյուջեի նախագիծ և միջոցներ է ձեռնարկելու սեփական դրամ ստեղծելու ուղղությամբ: Նրա շնորհիվ ծրագրվեց պետության բյուջեն և մշակվեց համապատասխան ծրագիր, որը երկրորդ անգամ վարչապետ ընտրված Հովհ. Քաջազնունին ներկայացրեց Հայաստանի Խորհրդարանին:

Երբ 1919 թ. Մայիսի 28-ին ընդունվեց «Անկախ և միացյալ Հայաստանի մասին» ակտը, Ժողովրդական կուսակցությունը, հիմնավորելով, որ այն միակողմանի բնույթ է կրում, չունի Փարիզում գտնվող Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարի հավանությունը, չի բխում Հայկական հարցի միջազգային իրավիճակից, չի համապատասխանում հայ ժողովրդի շահերին, հետևաբար, չի ընդունում այն, և պահանջեց չեղյալ հայտարարել այդ ակտը: Կառավարությունը մերժեց ընդունել այդ պահանջը և 1919 թ. հունիսի 24-ին ՀԺԿ-ական չորս նախարարներ՝ Ս.Հարությունյանը, Ա. Էնֆիաջյանցը, Գ. Մելիք-Ղարագյոզյանը և Ք. Վերմիշյանը, կառավարության կազմից դուրս եկան և կոալիցիան վերջ գտավ:

Ի վերջո, քաղաքական փոփոխությունների և անկայուն վիճակի պատճառով Ա.Էնֆիաջյանցը ստիպված արտագաղթեց Բելգիա: Բրյուսելում նա հիմնեց «Էնֆի» անունով ծխախոտի ֆաբրիկա, որտեղ հիմնականում աշխատում էին բազմաթիվ գաղթական կովկասահայեր[2]: Ա.Էնֆիաջյանցը մահացել է 1924 թ. մարտի 4-ին:

Ա. Էնֆիաջյանցի կրտսեր եղբայրը՝ Տիգրանը, որպես գործարար հաջողությունների է հասել նավթարդյունաբերության ոլորտում: Նա թիֆլիսահայ վաճառական, Բաքվի նավթարդյունաբերության հիմնադիրներից Հովհ.Միրզոյանի ժառանգների կողմից 1886 թ. ստեղծված «Միրզոյան եղբայրներ և ընկ.» նավթարդյունաբերական և առևտրային ընկերության տնօրեններից էր[3]: Այն, ի թիվս 17 այլ ֆիրմաների, մտնում էր 1912 թ. Լոնդոնում Ս.Լիանոսյանի ստեղծած «Օյլ» նավթային խոշոր կորպորացիայի մեջ: Միրզոյան եղբայրների ընկերությունը, դարձավ ամենակայուն և արդյունավետ նավթարդյունաբերական ձեռնարկություններից մեկը: Դա արդյունք էր ֆիրմայի ղեկավարների, այդ թվում՝ Տիգրան Էնֆիաջյանցի մասնագիտական արդյունավետ գործունեության: Ընկերության 2.1 մլն հիմնադիր կապիտալը, շնորհիվ նավթային գործի այդ պրոֆեսիոնալների, 1915 թ. հասավ 3.22 մլն ռուբլու[4]:

Տ. Էնֆիաջյանցը Թիֆլիսում հայտնի էր իր հասարակական գործունեությամբ: Նա չորս տարի անընդմեջ՝ 1902-1905թթ., եղել է Թիֆլիսի քաղաքային դումայի վարչության

[1] «Ժողովուրդ», Ե., 1918, N: 1:
[2] Դադայան Խ., նշվ. աշխ., էջ 140:
[3] Դադայան Խ., Հայերը և Բաքուն (1850-ական թթ.-1920 թ.), Ե., 2006, էջ 15:
[4] Նույն տեղում, էջ 38:

անդամ[1], ինչպես նաև երկար տարիներ Թիֆլիսի ռեալական ուսումնարանի չքավոր սովորողների օգնության ընկերության անդամ էր[2]:

Вардан Есаян, Армянские табакопромышленники Тифлисской губернии. Крупнейшими представителями табачной промышленности Тифлисской губернии были Энфиаджянцы. Производство было основано в 1860-ых годах Амбарцумом Энфиаджяном и достигло своего пика в отношении объемов производства во время правления его сыновей: Ваге и Тиграна Энфиаджянов.

Энфиаджяны являлись не только крупными промышленниками Тифлисской губернии, но также оказали большое влияние на общественную и политическую жизнь Тифлиса, а в дальнейшем - первой республики Армении, сыграв большую роль в развитии армянской печати, а также деятельности ряда образовательных и благотворительных организаций. Арташес Энфиаджян недолгое время занимал пост министра финансов Первой республики Армениия.

Ключевые слова: табачная промышленность, механизация, книгопечатание, городская дума, Товарищество «Н. Г. Бозарджян и сыновья», коалиционное правительство.

Vardan Yesayan, Armenian tobacco producers in the state of Tiflis: the Enfiajyantses. The Enfiajyantses have been major representatives of the field of tobacco production in the state of Tiflis. The production has been established by Hambardzum Enfiajyants in 1860's and has reached its apogee in terms of its scale by the latter's sons: Vahe and Tigran.

The Enfiajyantses have not only been major industrialists in the state of Tiflis, but have also played a significant role in social and political life of Tiflis and later, in the first Republic of Armenia, committing to the development of Armenian press and a number of educational and charity companies. Artashes Enfiajyants has also occupied the office of minister of finance of the first Republic of Armenia for a short period of time.

Key words: tobacco industry, automating, publishing, city duma, "N.H. Bozarjyants and sons" company, coalition government.

---

[1] Кавказский календарь на 1903 год, Тифлис, 1902, с. 149-150, на 1904 год, Тифлис, 1903, с. 153-154, на 1905 год, Тифлис, 1904, с. 153-154, на 1906 год, Тифлис, 1905, с. 111.

[2] Кавказский календарь на 1917 год, с. 792.